



ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն. Գ. Բ. Ա. Կ. Ա. Ն. Ե. Ի. Ք. Ա. Ղ. Ա. Բ. Ա. Կ. Ա. Ն.

ՄԱՍԻՍ կը հրատարակուի ի կ. Պոլիս, ամէն ամիս 1ին և 15ին:
Հասցէ՝ կ. Պոլիս, Ղալաթիա հորատունկեան խան:
Զեռքէ կը ծախուի հատը 40 փարայ:

Բաժանորդագիրն
Պոլիս, տարեկան մէկ մէճիտ:
Գաւառները մէկ քառորդ օսկի:
Օտար երկիրք վեց ֆրանք:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 15 ՀՈԿՏԵՄԲԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ազգ. ժողովի հոկտեմբեր 6ին նիստն այն նիստերէն է որք երեսփոխանական դրութիւնը սիրելի և համակրելի կ'ընեն: Ազգն իր կենսական շահերուն կը հսկէ. այս է այդ օրուան ատենագրութեան ամփոփումը: Հոկտեմբեր 6ին մեր Ազգ. ժողովն զբաղեցաւ եկեղեցւոյ և դպրոցի երկուորեակ խնդրովն, և ազգին նշան տուաւ իր մտատանջութիւնն ու հոգածութիւնը քիչ մ'ալ նուիրել կրօնքին և իր զարգացումին:

Բայց ժողովն յարատեւելու համբերութիւն պիտի ունենայ, վասնզի այդ խնդիրներ մի քանի ամիսներու մէջ չեն տնօրինուիր: Կը յուսանք: Կաթ. Յանձնախումբը, կամ աւելի ճիշդն Յանձնախմբի անդամներէ ոմանք ա՛յն աստիճան զայրոյթ գրգռած են որ տարակոյս չկայ թէ զայրոյթի գրգռումը միշտ լարուած պիտի պահէ Ազգ. ժողովի անդամներու մէկ մասն ջիղերը: Երբ ժողով մը զայրոյթ ունի,

կը գործէ: Իսկ դպրոցական խնդիրն այնքան մտատանջութիւն կը դրաւ որ Ազգ. ժողովին անկարելի է թմրած մնալ:

Ի՞նչպէս պիտի ներկայանայ կաթ. Յանձնախումբն Ազգ. ժողովին: Դատարկ ձեռքերով պիտի գայ թէ տեղեկագրով: Յանձնախմբի ձեռքերը լեցուն ալ ըլլան թէ պարապ, արդէն դատապարտուած է: Առանց տեղեկագրի ոչինչ ունի ի պաշտպանութիւն իր քառամեայ անդործութեան. տեղեկագրով՝ չենք կարծեր որ կարենայ դոհացում տալ հանրային կարծիքին և ժողովի պահանջումներուն, որք դիւրաւ չեն գոհացուիր—եթէ երբեք գոհացուին: Մեզ այնպէս կը թուի թէ Յանձնախումբը կը խորհի որ կաթողիկոսական խնդիրը կը պարունակէ այնպիսի դժուարութիւններ զորս լուծելու միակ միջոցն է բնաւ չը լուծել, և գուցէ յաջորդ Յանձնախումբն ալ օգտուի իր նախորդի այս քաղաքականութենէն:

Եթէ դէպքերը պատկերացնենք մեր աչքերու հանդէպ, պիտի տեսնենք թէ 1882 թուականէն ի վեր—երբ վախճանեցաւ Գէորգ կաթողիկոս—բնաւ ուրիշ կերպով չէ տնօրինուած կաթողիկոսական խնդիրը: Այդ խնդիր կը յուզուէր 1883ին Ազգ. ժողովի մէջ, պարապայնքն ստի-

պողական էին. յանկարծ երեսփոխան մը, որ կաթողիկոսական խնդրի հրապոյրներէն հմայուած կը վերադառնար Ազգ. գործունէութեան ասպարէզը, ոտքի կը կանգնի և սրտաշարժ ձայնիւ կը հրաւիրէ երեսփոխանները պահ մը մէկդի թողուլ այդ խնդիրն և զբաղիլ աւելի կարեւոր գործով: Առաջարկն արտառուց էր, հետեւաբար հրապոյրիչ: Այդ երեսփոխանը կը պնդէր թէ Ազգ. ժողովը պէտք է կաթողիկոսական խնդրէ նախապատիւ համարի դրական խնդիրներն, և դրական են միայն այն խնդիրներն որք դրամական են: Պարզ խօսելով երեսփոխան էֆէնտին կ'ուզէր առաջնութիւն տալ երուսաղէմի պարտքի խնդրին—որ հինգ տարիէ ի վեր արդէն առաջնութիւն ունեցած էր ամէն օր: Ժողովն ահաբեկ իր ետեւէն քաշելու համար՝ դրական կեանքի փաստաբան տրիբունն յայտարարեց թէ ամէն մէկ օր որ կ'անցնի, Ազգն ութ ոսկի կը կորսնցնէ իբր տոկոս երուսաղէմի պարտքին: Ի՞նչ կորուստ ազգին, ըսաւ, եթէ կաթողիկոսական խնդիրն յաջորդ շաբաթ մեր հոգածութեան առարկայ ընենք. իսկ դիտէ՞ք ի՞նչ կորուստ եթէ երուսաղէմի խնդիրը մէկ շաբաթ յետաձգենք: — Ի՞նչ և քեզ ոսկի:

—Անանկ է՛ եա, անանկ է՛ եա, մըրմուացին այն երեսփոխաններն որք իրենց դրականութեան ապացոյցը կ'ուզէին տալ: Մէկ կողմ դրին կաթողիկոսական խնդիրն, սկսան երուսաղէմի պարտքով զբաղիլ. և երբ սթափեցան, ժամանակն անցած էր: Միայն թէ սա տարրերութեամբ որ շնորհիւ այդ դրականներու այժմ փոխանակ օրը 8 ոսկի տոկոսի առ նուազն 13 ոսկի տոկոս կը տրուի երուսաղէմի պարտքին: — Արեւելի 1717 թուոյն մէջ հրատարակուած տեղեկութիւններէն կ'երեւի որ երուսաղէմ այսօր տակաւին 34.000 ոսկի կը պարտի, զինուորական տուրքերէ գոյացած գումարն ամբողջապէս դանձելէ վերջ: Արդ առ նուազն 10 6 տոկոս հաշուելով կ'ուենանք օրական 6 ոսկի: Եւ միթէ հաւանական չէ՞ որ երբ կաթ. Թանճախմբէն տեղեկագիր պահանջուի, երուսաղէմի պարտքի խնդիրը ներկայացնէ: Վասնզի այն ժամանակի անձինք նոյն Թանճախմբի մէջ են, ապամագիտու-

թիւնը դարձեալ կը յաջողի: Ուրեմն ըստսենք դեռ երկու շաբաթ:

Կրթական խնդրի համար յուսահատութեան ճիշն արձկեց Պէրպէրեան էֆէնտի. զգացուց թէ հարկն ստիպողական է կրթական օրէնք մը ունենալու:

«Ազգային կրթութեան ընդհանուր «կանոնադրութեան կամ օրէնքի մը պէտքը միշտ կայ և կը մնայ, ըսաւ, հետեւապէս և կը շարունակէ մեր ազգային «վարժարանաց մեծաւ մասամբ տարտամ «և ապարդիւն ընթացքն. բազում ուրեք «Ազգին դրամն կը վատնի ի գուր, և շատ «տեղեր ալ հայ մանկտին գուրկ է բոլորը: «վին կրթութեան բարիքէն»: Ժողովն այդ խնդիրն իր օրակարգն անցուց և յաջորդ նստի մը անշուշտ կ'ընտրէ Թանճախումբ մը կրթական խնդրին համար, առանց վարանելու թէ Պարզեւաբաշխութիւններու փայլուն հանդէսներէ վերջ ներելի ըլլայ վկայել որ մեր դպրոցները խեղճ են:

Սակայն այդ Թանճախումբը կրնայ խղճի մոռք գործ տեսնել. ենթադրելով թէ ընդունակ անդամներէ կազմուի Թանճախումբը, սակայն այն մեծ աշխատութեան համար որ կը պահանջէ այսպիսի դործ մը, կարող են ժամանակ վատնել: Ոչ: Մենք անհրաժեշտ կը համարինք որ Ազգ. ժողովը գումար մը յատկացնէ այդ Թանճախումբի անդամներուն: Թանճախումբը կրնայ կազմուիլ երեք կամ հինգ անձերէ, և իւրաքանչիւրին պէտք է տալ առ նուազն հարիւր կամ հարիւր յիսուն ոսկի. այս դրամական փոխարինութիւն կարեւոր պայմանն է որ ընդունակ և կարող անձինք արդիւնաւոր կերպով աշխատին ազգային դաստիարակութեան խնդրի համար:

Թէ որչափ բազմակնձիռն է այդ խնդիրն, այդ յայտնի է. վեր ի վերոյ ուսումնասիրութեամբ ոչինչ կ'օգտուինք: Ի՞նչպէս կ'ուզենք որ մի քանի անձինք իրենց ժամանակի մեծ մասը նուիրեն այս խնդրին, մինչ ուրիշ կողմէ պէտք ունին այդ ժամանակին իրենց անձնական ելմտացոյցը հաւասարակշռելու համար, կ'ըբերունենք թէ ճիշտաբար աշխատին անոնք որ մի քանի ժամուան մէջ կրնան կարծիք գոյացնել իրենց ներկայացուած խնդիրներու մասին, բայց ամիսներով քննել, խոր-

հիւ, ուսումնասիրել, այդ դժուարին է: Ո՞չ ապաքէն Յանձնախումբի անդամք խել մը ծախսեր ունին ընելիք. օրինակի աղագաւ միթէ խորհրդակցութեան համար պէտք չունին շատ անդամ մէկտեղ հաւաքուիլ, մանաւանդ ձմեռ գիշերները, միթէ ծախքեր չլա՞ն, հիւրանոցի, ճաշարանի և այլն: Պէտք չունին ուսումնասիրել ուրիշ ժողովուրդներու օրէնքներն ու դրութիւնները, ծախս հարկաւոր չէ՞:

Պիտի ըսուի թէ դրամ ուսկից գըտնենք: Այն տեղէն գտնենք ո՞ւսկից մէկ երկու տարուան մէջ աւելի քան հարիւր հազար ոսկի առնուած է այսքան չէնքեր կառուցանելու համար: Խորհրդարան, վարժարան, հիւանդանոց, եկեղեցի օտարին դրամովը չեն շինուիր:

Ազգ. ժողովը կրնայ ելմտացոյցի մէջ մի քանի աւելորդ խաչեր համար եղած ծախքերը զեղջել և հինգ հարիւր ոսկւոյ գումար մը գտնել կրթական խնդրի ուսումնասիրութեան:

Մեր Պատրիարքարանի սնտուկը կը նմանի ալիւրի պարկի որ բոլորովին դատարակուած ալ ըլլայ դարձեալ մէջէն միշտ բան մը կ'ելլէ որչափ որ վրան վարեն:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԳՐԱՏՈՒՆԸ

Ա.

— 24, աղջիկս, չէ՞. ի՞նչ նայէ՛, ալ ատոր խօսքը չի պիտի ընես ինծի. չէ, զաւակս, ինչ կուզես ըսէ՛ առ բանը մ'ըսեր. աղջիկքերը կեանքիս ընկերներն են, զաւակս. անքիս լուսին հետ միտքի՞ս ալ լուսը կորսնցնեմ. չէ՛, աղջիկքերը ծախել չ'ըլլար. տե՛ս, ծախելու խօսքը մինչեւ անգամ ի՛նչպէս կիրք կը հանէ ինծի:

Կոյր վարժապետին կուրծքը տարապայման ելեւէջ մ'ունէր այս խօսքերն արտասանելով. ձայնը կը դողդոջէր, ու իր ականողեաց մէջ ձգմուած մտեղէն կարմիր գնտակները կը թաւալէին արագ կարծես զայրացկոտ արտայայտութիւն մը

հալածելով զոր չէին յաջողեր սակայն բռնել. դիմադները միայն տարօրէն իմն այլակերպեալ՝ արտայայտել կը թուէին ինչ որ այդ անթափանց աչերը չէին ցոլացներ:

Ձեռքի ձախող այլ բուռն շարժմամբ մը մէկ կողմ հրեց Սաթենիկի՝ ձեռքն որ իրեն կ'երկարէր իւր աչաց շերտը, այն ինչ թաթխուած ճաթած խաչվէի գաւաթին դեղին մէջ:

— Հայր, դեղդ դնէի...

— Կեցի՛ր, պատասխանեց կոյրը յողդողդ, ու քաշելով ինքզինք բազմոցին անկիւնէն ուր կծկուած էր՝ ցնցող քայլերով կը յառաջանար սենեկին մէջ. դէմքը տոգունած էր մահատիպ, ու ծիրանի այդ յատակին վրայ, հիմայ կարմիր մսէ գնտակները կեռասի կարմրութեամբ մը կը փայլէին:

— Ո՞ւր հայր, ո՞ւր. ու Սաթենիկ կը փորձէր թեւէն բռնել:

— 24, չեչտեց կոյրը անձկալից ու կը յառաջանար:

Արդէն ցցուած էր իր գրատան առջև որ սենեկին մէկ անկեան կը կպչէր, իւր ջղաձգական մատները բաղխմամբ դըպցուց փեղկին ապակիներուն, չօշափեց զայնը. լսե՛ր էք թուշնոյ մը թեւոց ընդհարումն ապակւոյն դէմ երբ յանկարծ մուրեալ կ'իյնայ սենեկի մը պատուհանին տակ. քաշեց փեղկերը նախ վարէն, յետոյ քիչ մը վերէն:

— Գո՛ց է, հայր, գոց է, տեսա՞ր, միշտ պարապ տեղը կասկած կ'ընես...

Բայց կոյրը ապահով չէր դեռ, ձեռքը սահեցնելով դրսանը դրաւ, փոքրիկ բանալի մը հանեց դուրս, ու ետ մղելով աղջկան ձեռքն որ օգնութեան կուգար իրեն, ձախ ձեռքովն առխարխափ գտաւ կղզանքն, աջովը բանալին մոցուց հոն. Դրատունը բացուած էր:

Կոյրին մատները կը սահէին Չամչեան պատմութենէն, Հայկազեան բառարանին վրայ, Ռօլէնէն Անաքարսիսին, Սենեկայ ճառից, Թեսալոքոսի, Տակիրտոսի և այն ամէն հատորներու վրայ զորս ի լոյս ընծալած է Սուրբ Ղազար, շարականային ըստուարութեամբ:

Կը սահէին իւր մատները արագ այդ մեծահատոր ու կաշեպատ գրեանց վրայ իր-

րեւ դաշնամուրի մը ստեղնաշարին (քլավիրէ) վրայ որոյ բարեձայնութիւնն ստուգել կ'ուզես. բայց ամեն գիրք իր տեղն էր, անխախտ իր տեղը. ալ հիմայ ապահով էր, աղօտ ժպիտ մը կը թափանցէր իր գէմքը. կոյրերու բնական շարժմամբ մը գլուխն աջ և ձախակ տատանելով մօտեցուց գրատան ստորին դարանին, գլխահակ մնաց հոն պահ մը կարծես հոտոտելու դարն որ կը շնչէր այդ մատենից մէջ։

— Տեսա՞ր, հայր, տեսա՞ր. ամեն անգամ պարապ տեղը դու կ'ելլաս. քու գիրքերուդ ո՞վ ձեռք կը դպցնէ. ո՞վ կը համարձակի անոնց դպչիլ։

Սաթիւնիկի ձայնը բողբոջանայ թեթեւ շեշտ մը ունէր. կոյրն իւր սովորական թափանցկոտութեամբ զգաց զայդ, կանգ առաւ մէկէն և իւր հինգ մատներովն որդեկին գլուխը փնտռելով օդին մէջ։

— Անուշիկ զաւակս, գիտե՞մ, անթի մեռնիլդ ալ գիտնաս նէ՝ (ա՛հ, վրադ բարի, աղջիկս) կոյր հօրդ գրքերուն ձեռք չես դպցներ, ադ ես գիտեմ, ողէ՛կ գիտեմ, աղջիկս. բայց երբ կը կասկածիմ թէ Տօքթ. Օհանճանին գործողութեամբ աչքիս բացուիլը կը յուսաս, և ատոր համար ստա՛կ պէտք է (շառլաթա՛նը, տօքթ. Պէկեանի մը պէս բժիշկ ինծի ըսաւ «ալ ադ գործողութեան ատենը անցած է»), հազար բաներ կ'անցնի մտքէս. ինծի անանկ կուգայ որ գրատունս ձեռքէս պիտի ելլայ, ուրիշ բան չէ՛, զաւակս, ուրիշ բան չէ. ուրիշ բան կրնա՞մ կասկածիլ մի, հէ՛, ըսէ՛, զաւակս, ուրիշ բան կրնա՞մ մի կասկածիլ...

Խանդավաղատանքը ծերունւոյն հնչուն ձայնը սղոտորած էր, իւր ձեռքին տակ զգաց որ աղջկան գլուխը կը խոնարհէր։

Ու հաստատ և արագ շեշտով մը.

— Ի՛նչ, աղջիկս, ի՛նչ, գլուխդ ծռեցիր։

Սաթենիկ կը լսէր։

— Ա՛, մի լար, անուշիկ զաւակս, մի լար։

Կոյրը փոճկած էր. կրծոցը վրայ քաշեց աղջիկն, ու շրթները փոխն ի փոխ կը համբուրէին որդեկին ձակասն ու կը մրմնջէին դեռ. «մի լար, անուշիկս, մի լար»։

Սաթենիկի հեծկտանքները կը լեցը-

նէին սենեակն, ու կարմիր գնդակներն ալ ողողուած էին արտասուաց մէջ։

Բ

Պատուական «պատուելի» մըն էր եղած ժամանակին Կարապետ վարժապետն. ադգին վաղեմի աշխատաւորներէն մին, բացառիկ դէմք մը մեր պատուելիներուն մէջ, որ փերեզակէ մը աւելի ուսուցչի մը նմանի. քառօրդ դար մը ամբողջ, առանց իւր կրթական գործունէութեան քսանհինգ ամեակի մը յաւակնութեան, ուսուցած էր «նախդիր տրական»ն ու Տիգրանայ աշխարհակալութիւններն, իւր հասկցած կերպով ադգասիրութիւն մը ներշնչելով իւր աշակերտաց. ա՛հ, ի՛նչ վարդանանց ճառեր չէր սրբագրած, և ի՛նչ նկարագրութիւններ Շաւարշանայ շուշանին ու Աւարայրի դաշտին։

Փեշեր մը, պատուելին միայնակ իւր խուցին մէջ, սեղանին առջեւ կքած էր գլուխը «ճառ»ի մը վրայ, ոչ ոք կար սենեկին մէջ, մտասոյց պատուելին ու իւր ճառը միայն, երբ յանկարծ իւր եռամեայ Արշակն երեւցաւ սենեկին սեմին վերայ. պատուելին չարգիլեց մանկան ներս մտնել. Արշակ խայտադեղ մտեցաւ գրասեղանին թղթերու դէզին, կաղամարին ու գրքերուն որոց «պարկենք»ը կը հետաքրքրէր իւր փոքրիկ երեւակայութիւնը. պատուելին գրկեց իւր որդին, ծնգերուն վրայ առաւ, շոյեց, գգուեց, համբուրեց զայն, կարծես իւր գորովոյն մէջ փնտռելու ճառին ներշնչումը որ կը յամառէր իրմէ խոյս տալ ադգիւր. Արշակ՝ պնակիս աննշմարելի կերպիւ մը որ մանկանց յատուկ է, իւր թաթիկներուն մէջ էր առած «պապայ»ին գրիչը. վարժապետը խանդավաղատեցաւ. «հա՞, հոգիս, մեծնաս նէ դուռն ալ հօրդ պէս գիր պիտի գրես»։ և մինչ կը փորձէր գրիչը նորա թաթիկներէն խլել, ա՛հ, նենգաւոր դիպուած. չէր գիտեր ինչպէս, — չէ՛ պատուելին յաւիտեան չպիտի կրնար բացատրել ձեզի և նոյն իսկ ինքզինքին թէ ինչպէս — յանկարծ սուր, շատ սուր գամի մը խրին զգացեր էր իւր ուղեղին մէջ։

Ձախ աչքը կորոյս պատուելին. Գրիչը որ հայկաբանին ապրուստը, չէր կրցած

տալ, կ'առնէր սակայն նորա աչաց լոյսն :

Արշակ մեռած էր տարի մը յետոյ, ու Սթենիկ ալ նախախնամական բան մը կը նկատէր անոր մահը. «խեղճ տղան սրտին մէջ յաւիտեան կը-ի մը պիտի ունենար» :

Պատուելիին աչքը խնամեր էին, արդէն «միաջէն» սկսէր էին զինք կոչել. բայց իւր ականաբոյժը, օր մը ուրիշ բժիշկ մ'ալ բերելով իւր հետ և անոր հետ խորհրդակցելով ընդ երկար՝ ձեռքերը չփելով մօտեցած էր իրեն և քան մը ըսելու երեւոյթն ունէր զոր չէր գիտեր ինչպէ՛ս սկսիլ :

Բայց ի՛նչ որ ստո՛յգ գիտէր բժիշկը՝ սա էր թէ, հարկ անհրաժեշտ էր արմատախիւ ընել ձախ աչքը, աջը փրկելու համար :

«Արմատախիւ՛», պոռաց, գոչեց պատուելին ու կերպով մը վռնտեց իւր բժիշկները :

«Արմատախիւ՛...»

Եւ յայնմհետէ միաջէնը իւր աչաց լոյսը գտնելու համար խաւարամիտ կանանց դեղերուն դիմեց. բայց պահ մը, այո, պահ մը միայն, զի շուտ հարկ եղաւ կոչել նոյն բժիշկներն և ուրիշներ ալ, աջը խնամելու համար :

Վարակուած էր աջն ալ :

Հէ՛գ Պատուելին, կը հաւանէր հիմայ որ խէլին ձախը. բայց ուշ էր. միաջէնը աչազուրկ կոչեցին : «Համակրութեամբ, համակրութեամբ կ'ըլլայ եղբր», կը պատասխանէր պատուելին եղբիւ ձայնիւ անոնց որք կը հետաքրքրուէին թէ ի՛նչ պէս ձախ աչքը վնասուելով կրցած է աջն ալ վարակուիլ :

Տոքթ. Աստուածատուր Բաղատրած էր իրեն թէ ի՛նչպէս բժշկականութեան մէջ, «Ե՛բ-Ե՛ի օրէնքով, մարդուս մէկ ականջը խլանալով միւսն ալ կրնայ խլանալ, կամ մէկ աչքը կուրնալով միւսն ալ կրնայ կուրանալ :

Վեց ամիս խաւարին դէմ մղած այս անօգուտ պայքարէն յետոյ աչազուրկը շարունակել ուզեց իւր դասախօսութիւնները, զոր իւր կրթական գործ միւս եւս «պայքար մը» նկատած էր միշտ խաւարին դէմ :

Իրեն յաջորդ մը կարգած էին, աւելի ասան ամսականաւ, աւելի երիտասարդ

ուսուցիչ մը որ «գրագիտութիւն» ալ դաս պիտի տար. պատուելին գիմումներ ըրաւ, «կոյր էր, բայց փառք Աստուծոյ ձայնը տեղն էր եթէ աչքերը կորուսած էր. Ագգային Պատմութիւն պիտի դասախօսէր, պիտի պարփէր վերջապէս» :

Բայց հոգարարձութեան չափազանց եռանդուն անդամ մը ըսած էր. «Աղէկ, աղէկ, ձայնը կորսնցուցած չէ, գիտենք, բայց մենք ձայնաւոր դասատուի պէտք չունինք» :

Վեց մէծիտով կ'ապրէր պատուելին զոր իրեն իբր ամսական յատկացուցած էր էֆէնտի մը որուն տան մէջ որդւոցը դասախօսած էր ատենօք վարժապետը :

Պատուելին խնայողութիւն չէր ըրած, իւր կեանքը խնայողութենէ աւելի բան մը եղած էր, զրկա՛նք :

Բարեբաղդաբար, Տոքթ. Աստուածատուր, իւր եղբորորդին, նոր «տօքթօր ելած» Թըպիչէէն, ձրի կը դարմանէր զինք, և աւելի մեծ բարեբաղդութեամբ մը պատուելին բազմանդամ ընտանեաց հայր մը չէր. ինքն, աղջիկը կը կազմէին այդ ընտանիքն, որոյ երրորդ անդամն էր իւր գրատունը, — պատուելին պիտի սաստէր զիս որ չեմ ըսեր առաջինը :

Ի՛հ, ստուգիւ անձնաւորութիւն մ'էր համակ այդ գրատունը վարժապետին համար. չորս փայտէ չինուած խոռոչ մը չէր այն որ կը պատասպարէր իւր մէջ ծըթռած «մատեան»ներու այլակերպ կուտակում մը, այլ կարծես տարբեր, աննիւթական բան մը, վերացականութիւն մը, վերջապէս դարերու իմաստութիւնը, ինչպէս ինք կ'ըսէր :

Պէտք էր լսել պատուելին, ի՛նչ երկիւղածութեամբ կը խօսէր գրատան վրայ, կարծես բարեպաշտական առարկայի մը վրայ. կրօնամոլ մը պիտի խաչակնքէր իր երեսը, պատուելին գրատուն արտասանելը լսելով յանգարծ. և իրօք ալ ծերունւոյն բերնին մէջ գրատուն բառն այնքան անսովոր, վեհ ու նուիրական նշանակութիւն մը կ'առնուր որ հէգ գրամուրդէթ իւր մասին սովոր էր գրելու փոխանակ «գրատուն»ի «Գրատուն», աւանդական խոշոր ու ակիշաւոր գիմով մը :

Դեհ, գրատունը...

Միամիտ պատուելի. գուցէ իրաւունք

ալ ունենար անձնաւորութիւն մը համարելու իւր սիրական մատենաները որոցմէ մին ամեն օր կ'ելնէր իւր տեղէն իւր ականջին խօսելու համար :

Ամէն օր բազմադարեան գրուածոց դարուան մը այդ թարգմանութիւնները կը կարդար Սաթենիկ իւր հօր, բայց աւելի յաճախ հայ մատենագիրները սլաւոնական կուտար իւր աղջկան ընթեռնուլ : զմայլմամբ կ'ունկնդրէր այն ատեն աշագուրկը, հմայեալ, վերացեալ, կարծես հաղորդակցութեան մտնելով նախնեաց ողորոյն հետ :

«Ապրի՛ս, ապրի՛ս» մը կ'արձակէր խռւպոտ, ամեն անգամ որ հանգիստ մը առնուր Սաթենիկի ձայնիկը : մերթ կ'ուզէր գիրքը, ու իւր երբեմնի կոտորած մէկ նշանին վրայ դնելով մատը, կը հարցնէր իւր աղջկան թէ ստուգիւ այն հատուածն է զոր կը կարծէր ինք : և այն ատեն նախկին հայկաբանը գոց կ'արտասանէր զայն գրաւեալ ու հոգեզմայլ, կոյր տէրվիչ մը նման որ իւր աղօթքը չ'արտասաներ կարծես, այլ կ'երգէ :

Ազգային Պատմութենէն ալ իւր աչերը կորսնցնելէն ի վեր, Կոյրն Տիրանայ պատմութիւնը կուտար միշտ կարդալու Սաթենիկի : Հէգ աղջիկ, ո՛րքան կը հակառակէր սակայն այդ ընթերցման՝ յուզման առիթ մը խնայելու համար իւր կոյր հօրը :

«Սաթէ՛ն, Սաթէ՛ն, աչքերս կուրցան, սակայն հիմա աւելի աղէկ կը հասկնամ, կ'ըմբռնեմ Տիրանի պատմութիւնը, շատ աւելի աղէկ» : Այսպէս կը դիտէր աշագուրկը իւր աղջկան երբ Սաթէն կը կարդար իրեն դժբաղդ իշխանին եղերական պատմութիւնը :

Ամէն յուզիչ հատուածի ազատ ժպիտ մը ունէր նա, կարծես այդ հատուածն ստորագծելու, և ամեն պարբերութեանց իբր կէտադրութիւն «հա՛, հա՛» մը ունէր մրմնջելու :

Հայկաբանը «Ողբ Տիրանայ» վերնագրով քերթուած մ'ալ սկսած էր, և երբ այդպէս իւր քերթուածին ներշնչումը, իւր սիրտանքն, հպարտութիւնը, այդ գրատան մէջ կը գտնէր, իւր Գրատան մէջ, աղջկը կուգար մերթ գինքր թախանձել որ վաճառէ զայն, համբաւաւոր գործողութեան դրամ հայթայթելու համար, որով իւր հօր աչաց բացումը կը

յուսար : Բայց երբէ՛ք, երբէ՛ք աշագուրկը չ'պիտի հաճէր յայդմ, երբէ՛ք : «Շառլաթանները, Տօքթ. Պէկեան չէ՞ր տուած իւր վճիռը», և յետոյ :

— Ի՛նչ, աղջիկս, ադ կէս վայրենի ցեղերուն չա՞ր ալ չ'կանք, որ իրենց ձիէն, այդ անբան անասունէն չեն բաժնուիր, իրենց ընկերն ըլլալուն համար, ու մենք վարժապետներս ձեռքէ հանե՞նք մեր գրքերը, մեր մտքին վսեմ ընկերները չէ, աղջիկս, չէ, ատոր խօսքն ալ չ'ընեն ինծի :

Գ .

Տօքթ. Աստուածատուր : առաւօտ մը եկած էր կոյրը այցելելու, բայց պատուելին իւր աչքը քննել տալէ առաջ ըստ իրեն : «Աստուր, զաւակս, սա մեր Սաթէնը նայէիր մէյմը, քիչ մը տաքութիւն ունի» : բժիշկն արագ քննութիւն մը ըրաւ : «Բան մը չ'ունի», թող զգոյշ կենայ քանի մը օր» :

Բժիշկն յաջորդ օրն ալ եկաւ, այս անգամ աւելի երկար քննեց, չրթները կրծկեց, ու դեղագիր մը տալով անկողնէն չ'ելնել պատուիրեց հիւանդին երբ արդէն կարողութիւն չ'ունէր նա անկից շարժելու : Շաբաթ մը յետոյ «ծանր» էր Սաթենիկ : Տօքթ. Աստուածատուր, Տօքթ. Սմբատեանը, Բերայի հոջակաւոր փորձագէտը խորհրդակցութեան կոչեց :

Տագնապալից գտան հիւանդին վիճակը : Փրանսերէն անուն մ'ալ տուին զոր չէր յիշեր պատուելին, աղեսաց հիւանդութիւն մը :

— Աստուծոյ սիրուն համար ըլլայ, Տօքթօր, ի՞նչպէս գտաք աղջիկս, — հարցուցած էր պատուելին իւր ամենէն պատկառելի ձայնովն ու խօսքը փորձագէտին ուղղելով : — մէկ հատիկ աղջիկս է : իրմէ զատ մէկը չ'ունիմ աշխարհիս երեսը : Ի՛նչ պէտք է նէ ան բսէ՛ք : ուրիշ տօքթօր ալ բերել պէտք է, ի՞նչ պէտք է : Ի՛նչ կ'ընեմ չեմ ըներ, բոլոր բժիշկները տունս կը թափեմ : Ըսէ՛ք, տօքթօր, ի՞նչպէս գտաք աղջիկս :

Փորձագէտը կոյր հօր մը խռովեալ հետաքրքրութիւնը չէր տեսած իւր հիւանդորդւոյն վիճակը գիտնալու : իւր աչերովը զաւակին դիմագծութեան և աչքերուն մէջ

ախտին գործած աւերը ստուգելու անհնարութիւնը, այնպիսի խոր վրդովում կը դնէր նորա ձայնին և շեշտերուն մէջ որ փորձագէտը խանդաղատեցաւ:

— Պատուելի, յարեց նա ծանր եղանակաւ մը, քաջ հօր մը կը նմանիս կոր. աղջկանդ հիւանդութիւնը թեթեւ չէ. բայց աղէկ նայիլ կ'ուզէ, Աստուծով կ'անցնէ. ուրիշ բժիշկի պէտք չ'կայ. տօքթօրը դեղերուն առնուելու եղանակը կ'ըսէ՝ ձեզի. միի արիւն պիտի տաք. ես նորէն կուգամ. օգտաւորութիւն չեմ գիտեր ինչ վերջէն:

Ու մեկնած էր բժիշկը յանձնարարելով դեղ մը զոր միայն Բանդիւքն ունէր բոլոր Պոլսոյ մէջ և որուն շիշն ինը Փրանք կարծէր մէկ օրուան համար:

Արգանակներ պատուիրած էին բժիշկներն և միի արիւն, որուն համար յատուկ ճնշիչ մեքենայի մը պէտք կար. բժիշկը չէր մոռցած տեղեկացնելու նաև թէ ուր կը վաճառուէր այդ գործիքը:

Տօքթ. Աստուածատուր իւր ձեռամբ կը մատակարարէր հօրեղբօր դստեր դեղերը, բայց արգանակներուն համար, պատուելին սպասուհւոյ մը պէտք ունեցաւ:

Աչազուրկն, ինքն ալ օգտակար ըլլալ կը ջանար, և որովհետեւ կը «ջանար»՝ իրապէս օգտակար կը կարծէր ինքզինք:

Սաթէնի խնամք չը պակսեցաւ:

Բերայի բժիշկն անգամ մ'ալ եկաւ իր հիւանդը տեսնելու. «հիւանդը՝ հիւանդ էր դեռ, բայց ալ անցուցած էր»: Այսպէս աւետեց հօրը:

Հետզհետէ Սաթէն աւելի աղէկ կ'զգար ինքզինք. կոյրն ալ իւր շօշափելեաց ապշեցուցիչ զգայնութեամբ կը հաստատէր իւր աղջկան այտերուն «գնդիլն», ինչպէս կ'ըսէր ինք:

Սաթէն ապաքինման մէջ էր. օր մը հարցուց իւր հօր թէ «ի՞նչպէս կը դիմանար իւր հիւանդութեան ծախուց, պարտք կ'ընէր իրեն համար». իւր ձայնին մէջ յանձնառու այլ խոր վիշտ մը կար. ծերունին բողոքեց. «Ատ ի՛նչ խօսք է, աղջիկս, անգամ մ'ալ ատանկ խօսք բերանդ չ'առնե՛ս, աչքիս դրամ մի կ'երեւայ, դաւակս, քու աղէկութիւնդ պէտք է ինծի»:

Հիմա ալ Սաթէնիկ սենեկին մէջ և սե-

նեկին յարկին վրայ կրնար ման գալ, և որովհետեւ բժիշկն աւելի մեծ շարժում թոյլատրած չէր իրեն՝ կը ձանձրանար. «Հայր, — ըսաւ օր մ'ալ, — սա Աստուծոյ տայիր, կը նեղանամ կոր.» կոյրը լռեց պահ մը ու պատասխանեց. «Մէյմը հարցնենք բժիշկին նայինք հրաման ունի՞ կարդալու»: Տօքթօրը չ'արդիւնեց ընթերցումը, ու յաջորդ օրը նոյն խնդրանքն աղջկան կողմանէ. պատուելին այս անգամ «ուրիշին տուեր էր զայն կարդալու»: Սաթէն այն ատեն «Նուման» ուղեց. աչազուրկը գրպանները խուզեց, դարձեալ խուզեց. «բանալին կորսնցուցած էր»:

— Վրան ձգած չ'ըլլաւ, — հայր, պատասխանեց Սաթէն որոյ ձայնը կը դողդոջէր, ու արդէն սենեկէն դուրս խոյացած էր:

Կոյրը իւր աղջկան ոտնաձայնը լսեց վերի սանդղան վրայ, ցնցուեցաւ, և իւր թեւերուն ետեւէն վազելով դէպի սենեկին դուռը:

— Սաթէնիկ, Սաթէն, ո՛ւր կ'երթաս, իս նայէ, Սաթէն, հոս եկուր, նայէ ի՛նչ պիտի ըսեմ, իս նայէ, եկուր, վա՛ր եկուր:

Սաթէնիկ արդէն գրատան առջեւ էր, որ գրքերէն մերկացած, իւր դեղնցած տախտակներուն աղօտ ստուերը կը ձգէր ապակիներուն պղտոր կանաչին վրայ:

Կոյրը վաճառած էր իւր գրատունը:

ՏԻԳՐԱՆ ԿԱՍՏԱՐԱԿԱՆ

ԱՌՊՐԻՊՈՐԷՑ - 2021 ՄԱՅ

ՅԱԽԵԼՈՒԱԾ ՄԸ

ՅԻՇԱՏԱԿՆԵՐՈՒԴՆԵՐ

Պիտի ներքե՞ս ինձ, Մա՛սի վերջին
թուոյն ընթերցումէն յետոյ, քանի մը տող
ալ իմ կողմէ յաւելուլ Յիշատակացդ վրայ
որք չեն պատկանիր սոսկ քու անձիդ, այլ
կեանքի մը որով դաս մը ամբողջ ապրած
ենք երկար տարիներ։ Մտային Ուղեւոր-
ութիւնդ եթէ շատերէն կարգացուեցաւ
այն հետաքրքրութեամբ որ կ'ընծայուի
քու բեղմնաւոր գրչիդ արտադրութեանց,
հետաքրքրութենէ տարրեր պագցում մը
ազդեց նախկին դասընկերներուդ՝ յրուած
աստ անդ, որը Պոլսոյ մէջ, որն ի դաւա-
ռըս, եւ շատերն, աւա՛ղ, ի գերեզման։
Ձեմ գիտեր թէ մեռեալ դաստիարակացդ
վրայ խօսելէ յետոյ, պիտի խօսի՞ն նաեւ
մեռեալ ընկերներուդ վրայ. առ այժմ
զանց ըրեր ես, եւ աղէկ ես ըրեր։ Որ-
չա՛փ արցունք պիտի խլէիր մեզմէ, եթէ,
օրինակի համար, վաղամեռիկ Մկրտիչ
Նորատունկեանին անունը տուած ըլլայիր,
այն մեր ամենուս սիրելի՝ աղնիւ, խեղա-
ցի, վեհանձն, գեռ ի՛նչ գիտնամ, այն-
քան ճիրքերով օժտեալ ընկերոջ։ Երիտա-
տասարդութեան ու պատանեկութեան մի-
ջին տարիքին մէջ կը գտնուէր նա. ման-
կական ձեւեր ունէր ու մանկական ան-
մեղութիւն, այլ կատարեալ մարդու խո-
հեր եւ առողջ դատողութիւն։ Թարգմանչաց
վարժարանի բոլոր դասընկերներուս մէջ
որք զմեզ կանխեցին ի միւս աշխարհ, Մը-
կըրտիչ Նորատունկեանը միայն—կամ ա-
ւելի ճիշդ՝ Պէպէն, ինչպէս կը կոչէինք
զինքն ընտանեկան շրջանակներու մէջ—
սրտիս մէջ կենդանի յիշատակ մը թո-
ղած է որ կը խռովէ զիս ամեն ան-
գամ որ իր անունը կը յիշեմ։ Դպրոցէն
դուրս ալ գրեթէ միատեղ կ'ապրէինք.
յետոյ, իրաւարանական վարժարանն յա-
ճախեցինք. առաջին տարուոյ քննութիւն-
ներէն յետոյ, դասախօսութիւնք դադ-
րեցան. Նորատունկեան վաճառականի մը
գրասենեակը մտաւ իր տոմարակալ, վա-

սընդի յաջողակ էր ամեն ուսմանց մէջ, և
այլ եւս զիրար շատ քիչ տեսանք. մերթ-
ընդ մերթ կը գրէինք իրարու։ Օր մ'ալ
իմացայ թէ Մկրտիչը հիւանդացեր է. օ-
գտիոխութեան համար կողի տարեր են։
Չարաշո՛ք օգտիոխութիւն, որ հիւան-
դաց համար տեսակ մը դատապարտու-
թիւն կը դառնայ։ Ես կ'սպասէի միշտ որ
պիտի առողջանայ եւ պիտի տեսնեմ սիրե-
լի ընկերս նոյն գեղեցիկ, նոյն կայտառ
կերպարանքովը, և պիտի շարունակենք
մեր եղբայրակցութիւնը։ Յնորքս շատ չի
տեսց։

Առաւօտ մը, Արեւելի Տեարց մին ա-
ճապարանօք թուղթ մը տուաւ ձեռքս—
«Ասիկայ այսօր անպատճառ տպուելու է»
— ըսելով։

Ձեռագիրը տպարան յանձնելէ առաջ
աչք մը ածեցի վրան։

Մկրտիչ Նորատունկեանին մահուան
ծանուցումն էր...

Այդ դառն օրէն ի վեր, ամեն անգամ
որ ապագայի պատրաստութեամբ խօսքեր
կը լսեմ, հեգնութիւն մը կուգայ չրթան-
ցըս վրայ։ Միթէ մարդուս բոլոր կեանքը
սա ռամկական խօսքին մէջ չի՞ պարու-
նակուիր «Այսօր կ'անք, վաղը չիկանք»։
Ո՛չ ոք, մեր դասընկերներուն մէջ, Մկր-
տիչին չափ քաջաւոզ էր. ո՛չ ոք անոր
չափ ոգի ի բռին աշխատեցաւ ապագայի
պատրաստութեամբ համար. դեռ քսան տա-
րեկան չիկար ու քանի մը լեզու գիտէր.
իրաւաբանութեան մէջ յաջող էր, տոմա-
րակալութիւնը ձեռքէ չէր ձգեր. եթէ
փաստաբան չըլլար, բժիշկ ըլլալու չափ
տաղանդ ունէր։ Եւ սակայն իր բոլոր ա-
պագայն Սկիւտարի գերեզմանատան մէջ
գտաւ, ուր գնաց հանգչիլ իր պատուա-
կան հօրն ու եղբորը քովիկ։

Որչա՛փ փափաքելի էր որ, Թարգման-
չաց վարժարանին ու Թարգմանիչ աշա-
կերտաց վրայ խօսելու առթիւ, խօսէիր
նոս Բարեւսը ընկերութեան վրայ։ Միթէ
այդ ընկերութիւնը չէ՞ր, որ փոքրիկ Թարգ-
մանիչներու գունդ մը կազմելու գրգիռ
կուտար մեզ. ընդհանուր միջոց մը կար
մէջընկալ թէ մեր տուամներու Թարգմա-
նութեանց ո՛րը պատիւ պիտի ունենար
Թատերաբեմն ելնելու, վասնզի միւսնոյն

ժամանակ, ազդարարութեանց մէջ պիտի տպուէր թարգմանչին անունը։ Ի՞նչ փառք։ Վերջապէս, եթէ չեմ սխալիր, Շիրտանեան արժանացաւ այդ փառքին՝ իր Լիւնի Սաբանդաշին թարգմանութեամբ։ Այն վարկեանէն, սկսանք աշխարհի իբր երջանկագոյն արարածը նկատել զինքը. դասովին կ'ըզայինք իր պանդուխտ կեանքին, եկեղեցւոյ խցիկին մէջ իր անցուցած տիտուր գիշերներուն, վերջապէս իր ամեն դժբաղդութեանց, որովհետեւ ներկայացման իրիկունը, յաւարտ Լիւնի Սաբանդաշին, «ի տես, ի տես» կոչուած էր թարգմանիչն ու ծախահարուած Օրթագիւղի ազնուականներէն։ Յաջորդ օրը, դպրոցին մէջ կը պատկանէինք իրմէ։

Բարեսէր բնկերութիւնն այս տեսակ հաճոյքներ միայն չէր պատճառեր մեզ. ճշմարիտ բարերար մ'էին անոր անդամոց ոմանք թարգմանչաց վարժարանին համար։ Մ. Ս. մանաւանդ, հիմնադիրն և ոգին այդ բնկերութեան, հոգաբարձու էր միանգամայն. բայց ո՛չ թէ այժմեան Բարեկորդութեան Հրահանգի հետեւորդաց նման պաշտօնական հոգաբարձու մը. այլ վեհանձն, առատաձեռն. Պոլսոյ էն նշաւոր ուսուցիչները բերած լեցուցած էր դպրոցին մէջ, ամսականները կը վճարէր առատապէս, աշակերտները չէր ճանբեր թոշակին չվճարելուն համար։ Ամեն առաւօտ կուգար, զուարթ, աշխոյժ գիւմբ. — «Բանի մը պէտք ունի՞ք» — այս էր առաջին հարցումը զոր կ'ուղղէր սրահէն ներս, և ահա՛ խումբ մը աշակերտք դասադիրքի պէտք ունէին, ուսուցիչ մը՝ կանխավճարի, միւսն ամսականի յաւելման։ Մ. Ս. կը վճարէր խիոյն իր անձնական քսակէն, առանց դպրոցին պիւտճէն մտածելու, առանց հաշիւ ընելու։ Իր հոգաբարձութեան թուականը թարգմանչաց վարժարանին ռսկեդարն եղաւ, բառին նիւթական նշանակութեամբ։ Ընդհանուր բարեբաստութեան մէջ էին ուսուցիչք, պաշտօնեայք, աշակերտք, ամենքն ալ, փասն զի դրամական չէին մըտածեր։ Մ. Ս. ձեռքը գրպանն էր միշտ։ Դպրոցէն դուրս ալ այսպէս եղաւ նա. հագորտումէկ բարիք կ'ընէր գիւղին մէջ։ Աղքատ խանութպաններուն դրամագլուխ կը դնէր, հեղինակաց գործերը կը տպագրէր իր ծախիւք։

Եւ ահա առաւօտ մը այլ եւս դպրոց չեկաւ։ Սգոյ օր մը եղաւ մեզ համար երբ լսեցինք իր դժբաղդութիւնը։ Խեղճերնիս չէր հասներ թէ ի՞նչ անցած դարձած էր. բայց իր յիշատակը միշտ քաղցր էր մեզ համար։

Երեք տարի յետոյ, իրիկուն մը, ուշ ժամանակ, քանի մը դասընկերք Օրթագիւղի շուկայն վաղեցինք, տեսնելու համար այդ բարեսիրտ անձն որ այլ եւս արձակուած՝ իր ընտանի յարկը կը վերադառնար։ Կառքէն իջնելուն, ձեւակերպութեան համր, երաշխաւոր մը պահանջուեցաւ։ Ո՛չ ոք կը ներկայանար։ Ամբողջ շուկան, ամբողջ գիւղը տակնուվրայ ըրին, և չգտնուեցաւ մէկն որ ներկայանար և այդ փոքրիկ ձեւակերպութիւնը կատարել յօժարէր։ Վերջապէս համեստ խանութպան մը, Բարթամ աղա, ներկայացաւ իբր երաշխաւոր իր վաղեմի բարեկամին ու բարերարին, և առաջնորդեց զնա ի տուն։

Այդ երեկոյն, իրական գաղափար մը կազմեցինք մարդկային սրտի երախտագիտութեան վրայ։

Վերոյիշեալ երեք տարիներու միջոցին թարգմանչաց վարժարանը խանգարուած էր։ Դասատուք առեր քալեր էին, ու խեղճ Աւետիս Պատուելին միայն կը մընար կանգուն։ Ինքը դրամի համար չէր աշխատեր, այլ գաղափարի համար։ Աշակերտներն ալ սկսան ցրուիլ և մեծագոյն մասն յաճախեցին Լուսաւորչեան վարժարանն որ յոյժ փայլուն վիճակ մը ունէր յայնժամ։ Պատուելին խորին ցաւօք տեսաւ որ իր հաւատարիմ աշակերտք մէկիկ մէկիկ հոռմէականաց դպրոցը կ'անցնէին։ Ասոնց կարգէն էի ես ալ. շատ անգամ կը պատահէի նմա նոյն խիւ Լուսաւորչեան վարժարանի փողոցին մէջ. ինք թարգմանչացէն կը վերադառնար ու տուն կ'երթար գլխիկոր. սովորաբար դեզի շիւ մը կը գտնուէր ձեռքը։

— Դո՛ւն ալ գացիր, կ'ըսէր դողդոջուն ծերունին հառաջախառն շէշտով մը. Ա'խ, կեանքիս էն մեծ ցաւն եղաւ այս, Դոնէ զգուշացէ՛ք կրօնական վարդապետութիւններէն. մի՛ մոլորիք. խրատներս յիշեցէք։

—Պատուելի, անհոգ եղիք, կրօնադիտութեան դաս չիկայ. դպրոցին մէջ. բոլորովին հազատ դաստիարակութիւն մը կ'առնունք:

Ասով կը մխիթարուէր ու ճամբան կը շարունակէր:

Եւ յիրաւի, կրօնադիտութեան դաս չիկար: Մենք՝ որ պատուելիին դասախօսութիւններէն պաշարուած, կը կարծէինք թէ մեր ընդունելութեան յաջորդ օրն իսկ հռովմէադաւանութիւն պիտի քարոզէին մեզ, ուրախութեամբ կը տեսնէինք որ այդպիսի բան չիկար: Լեզու, գիտութիւն, ուսմունք. ուրիշ ոչինչ: Ամիսներ անցան այսպէս և մեր զարմանքը փոխուեցաւ սա համոզման թէ Աւետիս վարժապետ կը չափազանցէր իր յոռետեսութիւնը:

Օգոստոս ամսոյ վերջերն ընդունուած էինք ի Լուսաւորչեան վարժարան և դեկտեմբերի սկիզբը՝ տնօրէնութեան կողմէ ծանուցուեցաւ թէ դպրոցին մէջ թատերական ներկայացում մը տալու արտօնութիւն կը շնորհուէր բարձրագոյն երկու կարգերուն: Ա' ուրախութիւննիս չափ ու սահման չունէր. ժողովքներ ըրինք, խաղը որոշուեցաւ և դերերը բաժնելու կը պատրաստուէինք, երբ հայերէնի դասատուն—հռովմէական վարդապետ մը՝ որ այժմ հռովմէականութիւնն ալ թողած է, վարդապետութիւնն ալ—համոզակեր բառերով և ողորձ ձայնով յայտարարութիւն մը ըրաւ մեզ, թէ «վարժարանին տեսչութիւնը կը փափագի որ Լուսաւորչական աշակերտներն ալ, հռովմէականաց նման, իթման երեկոյին Գիրք կարդան Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ»: Եւ յետոյ, սա սպառնալիքը սողոսկեցուց. «Իսկ անոնք որք մերժեն այս առաջարկը, պիտի զըրկուին թատերական ներկայացման մասնակցելէ»:

Այս անակնկալ յայտարարութեան և սպառնալեաց առջեւ զայրոյթը պատեց զմեզ, ինչպէս դու ալ անշուշտ լաւ կը յիշես, սիրելի Զօհրապ: Աւետիս պատուելիի պատուէրներն սկսան հնչել մեր ականջին. կարծես երկնից եօթներորդ բարձունքէն երկիր գլորած էինք յանկարծ:

Թատերական ներկայացումն իր բոլոր հրապոյրը կորսնցուց յաջա մեր և կարծեմ վերջ ի վերջոյ տեղի ալ չ'ունեցաւ. այսու

հանգերձ, Թարգմանչաց վարժարանի աշակերտներէն գտնուեցան ոմանք որ հաւանեցան Գիրք կարդալու և կարդացին, ազատամիտ երեւնալու տենչով, կամ տեսչութեան և իրենց միւս ընկերաց հաճոյ երեւնալու համար: Ես մերժողներու պարագլուխներէն էի, այդ պատճառաւ լաւ կը յիշեմ այս դէպքը որ այն ժամանակ լրագրական հրապարակն ալ ելաւ:

Զգիտեմ թէ Աւետիս պատուելին ի՞նչ մտածեց այս ամենը լսելով, վասնզի այնուհետեւ ալ չ'տեսանք զինքը. անկողին ինկած էր և քիչ օրէն մեռաւ, ձիւնոտ, փոթորկալից օդով մը: Այնքան սաստիկ էր ցուրտը խեղճ պատուելիին թաղման օրը, որ ո՛չ ոք համարձակեցաւ եկեղեցիէն անդին ընկերանալ դադաղին: Մէկ կանգուն բարձրութեամբ ձիւնով ծածկուած էին փողոցները: Լուսաւորչեան վարժարանին պատուհանէն դիտեցինք որ չորս մեռելակիրք՝ դժուարաւ կը տանէին դադաղը, և պանդուխտ քահանայն՝ առջեւէն, կը թաւալէր ձիւնին մէջ: Կարծես դադաղին խորէն, ձիւնապատ թաւչեայ ծածկոյթին ներքեւէն, աչքերը մեզ յառած էր սիրեցեալ վարժապետնիս, ու «մի՛ մոլորիք» կ'ըսէր:

.

Գաբրիէլ Ներշապուհի անունն ալ յիշած ես Յիշատակներուդ մէջ: Մեզմէ ո՞վ կրնայ մոռցած ըլլալ այդ պատուական դաստիարակը: Անոնք իսկ որ կ'ատէին թուարանութիւնը, կը պաշտէին Ներշապուհը. դասարանին մէջ, դպրոցէն դուրս հայր մըն էր, եղբայր մըն էր մեզ համար: Ի՞նչ գեղեցիկ յորդորներ կուտար մեզ, ի՞նչ գործնական դասեր: Բայց բան մը կայ որ հանելուկի կարգ անցած է ինձ համար:

Թուաբանութեան մէջ յաջողակ աշակերտներէն չէի. սոսկումս կուգար, երբ կը տեսնէի թէ շարաթն երեք անգամ, 80 ական խնդիր լուծել պէտք է. բոլոր ճիւղերս անօգուտ կը դառնային: «Միւսիւ Ներշապուհը», ինչպէս կը կոչէինք զինքը դպրոցին մէջ, գիտէր թէ թուաբանութենէ խլած ժամանակս կը նուիրէի հայերէն դասերուս, շարագրութեան, և այլոց որոցմէ ասորի կ'ըզայի: Երբ տեսաւ որ իր յորդորներն անօգուտ եղան թուանը-

չաններու սէրը սրտիս մէջ հաստատելու համար, ալ սկսաւ ծաղրել զիս դաւորներացս քով: Իրեն համար՝ այս ալ սիրելու եղանակ մըն էր:

«Տիգրանը, կ'ըսէր իր պատկառելի ձայնով, երբ դպրոցէն ելլայ, երկար վերարկու մը պիտի հագնի, մէկ ձեռքը կիթառ մը բռնած և միւսն՝ ոտանաւորի տետրակ մը, ու անտառներուն խորը, ջուրներուն եզրը պիտի երթայ, և պիտի քերթէ»:

Ու բանաստեղծութեան և բանաստեղծներուն դէմ կը խօսէր: Ես գլուխս կը հակէի այս հեգնութեանց առջեւ, և հակառակ այն անհուն համակրանաց ու սիրոյն զոր կ'զգայի իրեն նկատմամբ, կը զայրանայի, կը վշտանայի ներքնապէս:

Ժամանակն անցաւ, դպրոցէն ելանք. բայց այդ վիշտը չէր փարատած սրտէս:

1881ին, օր մը նոր հրատարակութիւն մը տեսայ գրավաճառի մը քով ու գնեցի. ոտանաւորներու փոքրիկ տետրակ մըն էր, ԲԵՐԿՐԱՆՔ ՈՒ ՎԻՇՏՔ ՎԵՐՆԱԳՐՈՎ:

Հեղինակին անունը նայեցայ.

ԳԱՅՐԻԷԼ ՆԵՐՇԱՊՈՒՀ

«Միւսիս Ներշապուհը» բանաստեղծ:

Անհաւատալի կը թուէր ինձ. և մինչեւ ցարդ իր մեզի տուած գծուարին խնդրոց նման անլուծելի դարձած է ինձ համար թէ ինչպէ՛ս, այդ դրական մարդն, որ զիս կը հեգնէր բանաստեղծները սիրելու համար, իր կենաց աշնանը մէջ Մուսայից յարեր է: Վերջէն իմացայ որ շատ մը անտիպ քերթուածներ, ողբերգութիւններ ալ ունի եղեր: Կ'ուզէի իրեն հարցունել. առիթը չը ներկայացաւ: Ահա հրապարակաւ կ'ըսեմ, թէ պէտք չեմ գիտեր թէ այս տողերս պիհանդիպին իր աչքերուն: Բայց անշուշտ եմ որ կը ներէ իր հին մէկ աշակերտին այս անմեղ դիտողութեանը:

ՏԻԳՐԱՆ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԱՅՑ ՄԸ ՔՐԴԱՅ ՎՐԱՆՆԵՐՈՒՆ

Կէս գիշեր եղած կամ չեղած՝ արդէն մեք կը գտնուէինք Սէրկի Սարի (Շէրէֆէֆէ)՝ Քրդաց ցեղապետի վրանի ներքեւ, որ լոյս ունէր մինակ պէտքէն՝ Գալա լուսնեակն: Սարի լուսնակի գիշերը, հովերն ու շողերը մէկ թարթափով խորուն քուն մը շնորհեցին մեզ, անցաւ, թէ անշուարելի արագութեամբ թռաւ այդ գիշերը, չ'գիտեմ. միայն դեռ արշալոյսը չ'ծագած, դեռ Հայոց-սրբազան աղօթարանն չ'բացուած ու ծաւալուած, ահա՛ սկսան հնչել ամէն կողմէ անասնոց և վրանաբնակ Քրդաց գոռում գոչումներն, որք հետրաց միանալով՝ արշալուսի թունդը կուտային մեր սրտերուն. դա վրանաբնակներու ժամկոչի ձայնն էր, որ կ'աւետէր արշալոյսն, և ամէն օր՝ երբ կը պոռայ տաւարը, կանչէ սարի հաւքն, և փալիլի լուսնի աստղը ընդոտ՝ բոլորն ալ կը զարթնուն, կը հագուին ու կը սըգուին, և ամէն մէկն իր բան ու գործին կը վազէ: Սոքա անասնոց հետ այնքան մօտիկ կենցաղավարութիւն ունին, որ կարծես կ'ուզեն նմանիլ, նոցա հետ քնանան, և մէկտեղ արթնան. այսպէս են Քրդաց երկրագործ դասերն, թողունք «շէրէֆէֆէ», որք ունին վրան մը, գէնք և ձի մը. նոքա տարբեր վիճակ, և տարբեր դրութիւններ ունին, երկար և գրեթէ գրելու արժանի:

Մասնաւոր փափագով ես և ընկերքս աղօթարանէ յառաջ ոտքի ելած էինք. ըստ սովորութեան Քրդուհի աղջկունք ջուր բերին մեզ լուացուելու, և երեկոյեան կրակի փոշեթաղ կայծերն բռնկեցուցին՝ ճրագի փոխարէն. զի դեռ մութը նստած էր սարին ու դաշտին: Վրանատեղին քիչ մը հեռի էր անտառէն, կանանչադեղ և դուրան մարգագետնի մը վրայ. հաւքերը գացեր թագէներ էին անտառներու խորերը, չ'կար սոխակի նուագ, կաքաւի երգակ. գիշերային հաւքն միայն իւր անախորժ ձայնով կը կրկնար սարի ամայութեան մէջ: Քանի մը քայլ հեռացանք վրաններէն և փոքրիկ դարի մը վը-

րայ բարձրացանք դիտելու համար Մշու դաշտի տեսարանն գիշերային:

Խաւարն աւելի թանձրացած էր, արշալուսէն յառաջ կարծես մութը կը կըծկուի, կ'ամփոփուի լուսուն տեղի տալու համար, և այս միջան՝ գիւղացիք կ'ըսեն — Դոմայ մութ:

Արմայ մութ՝ ի՛նչ մութ հնութիւն:

Փորեցէք, բրեցէք այս ժողովուրդի կեանքը, և պիտի տեսնէք նախապատմական քա՛նի անթիւ հնութիւնք, հնութիւնք անցեալի, կենցաղի, խորհրդոց, գաղափարաց, գիտութեան, տգիտութեան, հաւատոյ և յաւիտենականութեան:

Ոչ դար, ոչ վար, բան մը չ'երեւիր Արածանիի մեծածաւալ այս հովտէն: Մթութեան ծովը կապուտ և ամպոտ ծածկեր էր բովանդակ տարածութիւնն, սարեր և ձորեր, գիւղեր, գիւղակներ քողքուած էին միմեկին: մարդ կ'ըգար զինքն անծանօթ անապատի մը մէջ, ուր աւազի ահեղ փոթորիկն երկինք ու գետինքը ծածկեր է, անապատն ծով դարձեր, և ծովն անապատ: Մշու դաշտն այդ պահուն կը պատկերէր մեզ Ժամբա՛ն ծով մը անեղր տարածութեամբ, լռին մթին, հանդարտ և մարմանդ, և եթէ՝ մեր առջևի վրաններու գոչնակն ու աղաղակը չ'ըլլային, պիտի կարծէինք թէ՝ Մշոյ խամրած ծաւալէն պը՞տ մը իսկ չ'ծխար, թէ չնչոզ ու փնչոզ չ'կար անդ, թէ՝ արածանին յորդեր ու առեր տարեր է: Անահուն երկնից երես ցան ու ցիր՝ սպիտակ կանդեղի նման շարուած ու կարուած էին բոլրք աստեղաց, լուսինն վաղուց անցեր անհետացեր էր, լուսնի — արշալուսի առաջնորդն երբեմն կը ճղղղոտար ու սրծառտար՝ պատրաստ կաքաւելելու ոսկերոծամ արեւու առջև. արեւելահարաւի կողմը սարերու գագաթներէն քչիկ մը բարձր ամպերու սեւ և դեղին կտորներ կը թաւալէին ու փռուէին, և ուշիկ ուշիկ երկնակամարը կը մերկանար՝ իր տփղոյն քողքէն: Դաշտի մշուշին մէջ ճրագ ու կրակ չ'կար, մինակ իննակնեայ սարի ստորոտ՝ Մշու — Դոմայ Ս. Կարապետի կաթողիկէի լուսամտէն փոքրիկ կայծ մը՝ աղօտ և հազիւ նշմարելի շողիկ մը արձկեր էր դուրս, լուսիկ մը վանքի

քարին ու հողին, ծաղիկն և առուակին. ի՞նչ կայծ էր արդեօք. — տաճարի կանթեղի լոյսն է, հոգեծարաւ ըխտաւորին յոյսը, այդ լոյսն ալ, ա՛հ, իբրեւ զպտորոյցն առկայծեալ և մշուշապա՛տ:

Աստուպի նման հեռուէ հեռու կը սլըւպոտային երբեմն կրակի կտորները, խաւարին մէջ խաւար գունով, խամրած փայլով. չ'կար ուրիշ լոյս այս մթութեան մէջ: Մշոյ քաղաքը հեռի էր մեզմէ, Տօրոսի շղթայէն կտոր մը դէպի դաշտ երկննալով՝ ծածկեր է Մշու արեւմտեան երեսը: Նա թագչած է խուլ ձորի մը մէջ, բնութեան լոյսը թուեր էր, արուեստական շող մը իսկ չունի և գիշերուայ այս պահուն՝ արմայ մութ ի Մուշ ճրագ չմնար: Խօլ խաւար և թանձր մրափ մը: Գարնան կամ աշնան ամպերուն, անձրեւներուն, երբեմն երբեմն փայլակի վաղանցուկ շողեր ցան ու ցիր սրծառներ կը սփռեն այդ ձորակին խաւար անկիւններն և կ'իսամաշ խորշերը:

Պահ մը անցեր էր, չէր անցեր, մինչ մեր աչքեր կը վարժուէին դիտելու անախորժ մթութիւնը, մինչ մեք մոռցած արեւելքի սարերը՝ հարաւ և արեւմուտք կը դառնայինք. մինչ անդին քիւրդ հովիւն իւր հովուական ցուպն վեր ուսին, թաղիքը կրնակին, իր մաշած փողին խռպոտ ձայնովն ոչխարը կը կանչէր, քրդուհիք դառնուկները փարախէն դէպի վար քչէին, մինչ ձայն ու ձուկ կը շատնար այս վրանաբնակներուն մէջ, մինչ մեր հանդիպակաց կողմի անտառին հաւքերն՝ թեւերը թափթուփ՝ առաւօտու գոհաբանութիւնը կ'երգէին, անտառին խորէն ու ձորէն ծերունի և բարձրասարաս կախամասիններու գագաթը կը հաւաքուէին և զիրար համբուրէին, և ահա մութն աննկատելի կերպով սկսաւ տեղի տալ: Ո՛ւր, ո՛ւր կ'երթար արդեօք. — երթար ու չը դառնար, ըսաւ ուղեկիցս, ի՛նչ դառն է խաւարին երեսը. կը մեղադրեն թէ՝ Արամ ի՛նչպէս խաբուեցաւ սատանայէն և նմա յեռա՛նք տուաւ:

Մուռ ու տարսուռ էր. պաղ՝ այլ քաղցր հով կը փչէր Պէպեւէ սարերէն, տակաւ պայծառանայր օդն և պայծառանային մեր աչքերն. թարմ ու փափուկ գեփիւռ մը գգուելով մեր դէմքը՝ կ'երթար համ-

բուրել խորոտիկ թփերն սարի բուսակա-
նութեան և քրդուհու հոլով մազերն, որ
մինչեւ կրունկն երկարի և ծածանի իւր
առնացի ուսերուն և երեսին վրայ, և այդ
մազերն արեւու, անձրեւու դէմ, լուս-
նակի, աղբերակի դէմ, սարի կանանչի
նման թփուին, կազմելով քրդուհու կանա-
ցի, այլ բնական չքեղ զարդերէն մինն:

Այսպէս տեսայ ի Ս. Յովհաննու վանս
լեռնցի մեր աշխոյժ հայուհիներն, սիրուն,
ծիծաղուն մազերով, Այսպէս հասն հար յը
տեսեր էր անմահ Պէշիկթաշլեանն ալ:

Այն ուր կ'երթայ գուարթադէմ, և սու-
րալով լեռանց վրան,
Փափուկ, թեթեւ ոտիցն ի ճեմ, ուսից
վրայ հերքն ծփան:

Այս բանաստեղծական քարին ու սա-
րին վրայ Պէշիկթաշլեաններ պէտք են,
որպէսզի հոգեգրեն նիւթն և աննիւթն:

Ալ արշալոյս էր, գեղալոյս, կանանչ
կարմիր շողերն հրեղէն ոսկեղէն արեւուն
թուեր ու խոնուեր էին օդին և ամպին,
երփներանգ գոյներով ծածկուեր է և ծա-
ծաներ արեւեքն ողջոյն, երամ երամ
սուրան և շորորան ճառագայթք, ամպէ
յամպ, և սարէ սար թռչելով ու ձգուե-
լով, պարզուելով և կծկուելով. բնութե-
նական աննման տեսարան: Հրաշագան
գրիչներ ո՞ւր են, որ գրեն և մրեն
զնմութիւն ու Գրգուռ, և ժանգառի եր-
կինքն Դաղօնաց լեռնադաշտին, որ ամէն
պարզ առաւօտներն նոր հարսի նման կա-
նանչ ու կարմիրով զարդարուի, ծա-
ղիկն լուսաւորի, լուսաւորի և խոտն ու
հոտն, բոյսն ու կոյսն, տաճարն և քարն,
մարդն ու վարդն, լոյս աչքերուն և խոյս
խաւարին: Թրթփան ու թրթուան գառ-
ներ ու ծառեր, հաւերն ու հաւքերն,
երկնքէն գետնէն խաղ ու տաղ, օձն իւր
ծակէն և արջն իւր բնէն արեւջեւ (արեւ
առջեւ) կ'ենեն, ընդհանուր ոգեւորու-
թիւն բնութեան մէջ և քրդական վրա-
նին մէջ, հոն ալ շարժում ու խնդում.
ուլերն ու գառները, հորթերն, արջառ-
ները կանանչութեան վրայ են. ո՞ւր են
քրդաց լաճերն, ո՞ւր փոքրիկ լեռնական-
ներն, անոնք ալ զարթեր և շարժեր են,
բոբիկ տկլող և կուշտիկ շարուեր էին
վրանի աջակողմն արեւու շողերուն դէմ,

և խառնիխուռն ձվձվալով՝ խոտերը կը
պճկէին, և ճարակէին. անօթի՞ էին արդ-
եօք: Այսպէս չեն հայ երախայքը:

Ահա և քրդուհիք՝ ջուհակի մքուքի
նման երթան գան, կաթը տեղաւորեն և
ձձունները հարնեն, գօտեպնդեալ՝ ժիր
երիտասարդի նման անդուլ կ'աշխատին,
օգնելով՝ ընկերակցելով, ու դեռ արեւը
չ'տաքցած բարձրացած, կ'աւարտեն վրա-
նի ներքին գործերն, և օճախ քարին վրայ
կը պատրաստեն ընտանեաց կոտորէլ:

Քիւրդք թէ 40-50 տարի յառաջ բո-
լորովին վրանարնակ էին և տուն տեղ,
արտ ու ափ երբեք չունէին: Գարնանէ
մինչեւ աշուն մեր լեռանց վրայ իրենց օ-
րերն անցնելէ ետեւ կը դառնային Տիգ-
րանակերտի կողմերը, մինչեւ խորերը,
ուր ձիւնն չ'այցելէր իր ցուրտ երեսով,
և ամէն մէկն իրենց որոշեալ վրանատե-
ղիները կը մնային մինչեւ գարուն. այս-
պէս արագիւլի նման՝ աշուն երթային և
գարուն գային. բայց երբ հոգատիրու-
թիւնն զգալի դարձաւ, պարսպ սարեր և
հողեր սկսան գրաւուիլ. քիւրդք յան-
կարծ զգացին իրենց անապագայ կեանքի
դառնութիւնը. սկսան հողեր գնել, խր-
ճիթներ շինել և տակաւ առ տակաւ ձեռք
երկնցուցին մաճին և արօրին:

Որչափ որ հող աւեր և տնակ ունին,
այլ նոքա չեն մոռցած վրանները. ամէն
գարնան կը քաշուին գիւղերէ հեռու և ի-
րենց սահմաններու մէջ՝ ջրաւէտ ու խո-
տաւէտ վայրերուն վրայ կը պարզեն իրենց
նախնայն յիշերը՝ վրանները:

Այժմ առաջուան նման ներքին կազ-
մակերպութիւն մը չունին քիւրդք, և ոչ
ցեղապետք առաջին իշխանութիւնն ու
ազդեցութիւնը:

Մեր այցելած վրաններու տեղաւոր-
ման մէջ կարգ ու կանոն չկայ գրեթէ.
խառնիխուռն պարզուած էին դէս ու դէն.
ցեղապետին ալ նախորդին ալ վրանները
մէկ գոյն ու կազմն ունէին. կար տարբե-
րութիւն ընդարձակութեան կողմէ, բայց
չկար արտաքին շուք ընդհանրապէս: Վը-
րանները սովորաբար երկու մասի կը բաժ-
նուին. միոյն մէջը կը նստին ընտանեաց
բոլոր անդամք, և միւսին տան անօթներն
և ալլն, հոն կը պահեն նժոյգներն՝ եթէ
ունին. աւելի կամ նուազ մեծութեամբ

վրաններ ալ կան, ուր առանձին տեղ պատրաստուած է հիւրերու համար. քըրդերը բաւական հիւրասէր են. հէ-րը Աս-ր-ձայ կ'ըսէն է կ'ըսեն:

Նոցա բոլոր տղամարդիկ՝ աղքատ ալ լինին, ձի և ղէնք ունին, թէև կան բացառութիւնները, այլ իրենց գլխաւոր հարստութիւնն այդ է. այսպէս է իրենց պապենական աւանդութիւնն, այսպէս կը սիրեն մնալ իրենք ալ:

Քրդաց ստուար մասն խաշնարածութիւն ալ կ'ընէ, մանաւանդ այս կողմերը: Անգիր, անուս ժողովուրդ են, այլ սակայն կը պահեն իրենց լեզուն, տարազն, նախնեաց աւանդութիւններն, քաջագործութիւններն և այլն:

Հէփաթիւն ունին, և անհամար խաղեր ու տաղեր իրենց հերոսներու վրայ:

Շէնքի, բնակարանի, հագուստի, կապուստի նուրբ ճաշակ չունին համարեա թէ, ի ձմերան իրենց պալատն է հասարակ գետնափոր խրճիթ մը, և ամառն՝ սեւուկ վրան մը. այս է իրենց ճարտարապետական չէնքն ու շուքն: Քրդական տարազն յայտնի է արդէն, շատ դժուարաւ կը ձգեն իրենց հալաւները, զգեստուց ծոփանէն շատ դժուարաւ կը ներգործեն անոնց: Բրդէ երկայն գլխարկ մը (քօլըզ), զոր տեսակ տեսակ շորերով կը փաթաթեն, չապիկ ու թուկալան մը, և մագէ կարճ ալ, զոր ընդհանրապէս ձմեռներ կը գործածեն: Քրդուհիք աւելի չարքաւ են. ընդ ամէն սպիտակ երկար շապիկ մը, սպիտակ կտաւէ երկար քօլ մըն ալ գլխուն վրայ, որ կը հասնի մինչեւ կրունկներն. կին և աղջիկ մէկ տարազ ունին, երեսներն բաց, ոտքերը բոպիկ, ազատ և արծաիկ օտարներու առջեւ:

Կին և երկրագործ միանգամայն. ոչխար տալար կ'արածեն, կը պահեն, և եթէ արք բացակայ լինին, նոցա տեղը կը բռնեն ամէն աշխատութեանց մէջ. իրենց լաճիքն ի մանկութենէ սաստիկ չարքաւ կը մեծցունեն, հովտի մը մէջ, անտառի մը խորն՝ ուր որ պատահեցաւ, կը ծնին. սարի և քարի վրայ կը պահեն, մինչեւ որ աչք բանայ, նստի կայնի, և յայնմհետէ կը մեծնայ՝ ինչպէս լեւոնաց բնակիչք:

Քրդաց և իրենց ծագման, լեզուին, վարուց, բարուց, սովորութեանց, ներ-

քին և արտաքին կենաց վրայ գրելու անհատնում բաներ կան, որք առհասարակ արժանի են մեծ ուսումնասիրութեան, զի իբրեւ դրացի ժողովուրդ Հայոց, նոցա կեանքը շատ հետաքրքրելի կողմեր ունի:

Բայց ո՛վ պիտի քրքրէ, մեծ ուսումնասիրութիւնք մեծ գրագիտաց գործն են, և այդ գրագէտք յոյժ փոքրաթիւ, ժամանակը կը թռչի մեծամեծ աւարով, տակաւին հայ ժողովուրդի ներքին կեանքը չ'ուսումնասիրուեցաւ, ո՛ւր կը մնայ քըրդաց և այլոց՝ ժամանակը՝ անդարձ կորուստ մըն է:

ԳԵՂՊՄ

Մուշ, 15 սեպտեմբեր

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐՈՒ ԿԱՅՔ ՄԸ

Սկիւտարի բարձանց վրայ, Նիզամիա-չիկի այգւոյն մէջ, — ուր այսօր չորս կողմէն բաց խոպան տափարակ մը և եթ մնացած է նախկին արգաւանդ պարտէզէն, իբր տխուր յիշատակ մուցուած սերնդեան մը, — հայ գնչուներ եկած հաստատած էին երկու շաբաթ առաջ իրենց կայքը:

Ինծի համար, անսահման բանաստեղծութիւն կայ այդ անուանը մէջ. կը սիրեմ այդ մարդիկն որք ամբողջ տիեզերքն ունին իրենց հայրենիք. որոց բարքերուն մէջ կը գտնես նախնի դարուց բարքերուն յաջորդութիւնն՝ անբեղհատ շղթայ մամբ մինչեւ իրենց փոխանցուած այսօր. որոց համար բնութիւնը կը պահէ իր ամէնէն գեղեցիկ վայրերն ու ամէնէն հիասքանչ տեսարանները. մարդիկ, որք իրենց բնագոյններէն յառաջ կը վարին միայն, և, ընկերական ամէն ընկալեալ կարգուսարքերու և ծեքծեքմանց անտեղեակ, արեւ արեգակին ու լուսնակ գիշերին ներքեւ կը պարզեն իրենց հաճոյքներն ու իրենց ցաւերը: Կը սիրեմ մանաւանդ իրենց ստոյիկեան անտարբերութիւնն, իրենց անհանդարտ ոգին որ գողցես կը մղէ զիրենք խուսափուկ իտէպլի մը որուն ետեւէն չափտի կրնան հասնիլ երբեք ի-

րենց դարաւոր աստուղականութեանը մէջ:

Կիրակի օր մը գացի տեսայ զիրենք:

Չորս ընտանիք էին, ընդ ամէնը քսան հոգի, Մարգուանի Հարմանլար-Մահլէսիէն եկած, երկու ամսուան մէջ կատարելով այդ դժնդակ ուղեւորութիւնը: Մեծերէն շատերն ելած գացած էին չորս դին, վաճառելու համար իրենց շինած սակառներն և կողովները: Հոն կային միայն այդ խումբակին մեծաւորն Արթին, ու կինը Մարինոս, ու իրենց կողմը տասնի չափ մանուկներ:

Վրանարնակ չեն ասոնք. իրենց տանիքը կը կաղմէ թաւաստեւ քուրձ մը զոր ցիցերու վրայ կը հաստատեն և որուն ներքեւ կը պառկին իրենց անկողիններուն վրայ: Յերեկին, այդ անկողինները՝ քուրձին տակ ծածկուած՝ տձեւ կոյտերով քառակուսի մը կը կազմեն: Մէկ կողմ կը բարձրանայ պրտուներու դէպ մը, զոր Սաքարիայի եղերքէն իրենց հետ բերած են և որոյմով կը շինեն այն սակառները զորս պզտիկները կ'երթան վաճառել ապա փողոցներուն մէջ:

Գնչուներուն այդ ամուլը կը դիտեմ ու շաղրութեամբ: Այրն, իբր երեսուն և հինգ տարեկան, դեղին մազերով ու դեղին պեխերով, բարձրահասակ ու վայելչակազմ մարդ մըն է. արեւէն այրած դէմքին վրայ հաստատամութիւն և հեղութիւն միանգամայն նկարուած է: Կինը, գլխուն վրայ լիւլիւն մը ձգած, կանոնաւոր դիմագծեր ունի, ձուածեւ պզտիկ դէմք մը, խաթուկ աչուրներ: Արեւն ու օդն իրեն դէմքին ալ տուած են այն թրջած աղիւսի գոյնն որ իրենց ամէնուն յատուկ է և ճշդապէս կը յարմարի իրենց մութ խարտեաչ մազերուն:

Այլ ուշադրութիւնս կը յառի մասնաւորապէս այն երկամեայ տղեկին վրայ որուն կաթ կուտայ Մարինոս: Մարդկային դէմքի մը վրայ տեսած չէի բնաւ այնչափ տգիւտութիւն. իր խորունկ աչուրները կարծես թէ ա'լ այս աշխարհէն դուրս բանի մը կը նային: Կը դողայ, հէգ սլըղտիկը, և իր երկու փոքրիկ թաթիկներուն մէջ բռնած մօրը ծիծը, — ողորմ ու արգահատելի ծիծ մը, որուն ծայրը կուգան կը յանգին կապոյտ երակներ հետզհետէ

թխանալով, — անյագարար կը ծծէ զայն:

— Ա'խ, ջերմը բռներ է, հա'յ աղպար, կ'ըսէ մայրն այնպիսի շեշտով մը որ սրբտիդ կ'ազդէ. Կէյազդէի մէջ հիւանդացաւ. հոս եթէ չտկուեցաւ, ա՛հ խաբար էղաւ զաւակս: Ա'խ, Աբրահամ, Ժեւր ըլլիմ, ինծի նայէ մէյ մը. նայէ, հայ աղպարը քեզի բան է բերեր: Հէյ զուրպան ըլլիմ Յիսուսի, դուն աղէկցուր զաւակս. լուս հաւատքիդ, լուս մեռոնիդ մեռնիմ: Չաղէկնար տղաս, հա'յ աղպար. վարդի պէս «ւէ՛շ էղաւ Աբրահամ, հա'յ աղպար:

Ու պզտիկին մարմինը կը դողայ իր հաստ վերարկուն մէջ, ուսկից դուրս կ'երկնան իր մանրիկ բոբիկ ոտները: Մայրն իր ձեռքերուն մէջ առած է այդ ոտներն, ու շունչովը կը տաքցնէ անոր դէմքը: Աչնան արեւ մը կայ լուսավառ, բայց արդէն կորսուած իր հրատապ ջերմութիւնը:

— Կեցիր քիչ մը կրակ վառենք, կ'ըսէ ամուսինը:

Ու կը ժողվէ ցորենի հասկերու շիւղեր որք վերջին հունձքէն մնացած են անդ, ու պզտիկ խարոյկ մը կը վառէ, որուն դէմ կը բռնեն Աբրահամը: Պզտիկին երեսը գոյն կուգայ կամաց կամաց. անդամները կ'զգայուէ երանութեամբ և շրթունքը կը բացուին մանկական յօրանջմամբ: Աչուրները բացած է հիմակ, և իր թաթիկները կը խաղան մօրը մազերուն հետ:

— Ա'խ, տաք կ'ուզէ. հա'յ աղպար, կը շարունակէ մայրն իր լալիկան ձայնով: Հայ քուրիկ մը բերաւ աս «ախ» ամենքն ալ շատ ապրին, մէյմէկ բան կը բերեն ամեն օր. Յիսուս Քրիստոս անոնց հոգին լուսաւորէ, արքայութեան դուռներ բանայ անոնց, հա'յ աղպար: Գուլպայ չունի մինակ, հա'յ աղպար. ոտքերը կը մսին Աբրահամիս, հա'յ աղպար:

Այդ «հայ աղպարը», որ յանկերգի մը պէս կը յեղյեղուի իր ամէն խօսքին վերջը, մուրացկանի մը հնարքը չէ, ո'չ, իր ազգակիցներուն գութը շարժելու համար. այդ խօսքին մէջ չես գիտեր ինչպէս կ'զգաս թէ սրտի մը ամբողջ խանդաղատանքը կայ:

Քիչ մը անդին չորսէն տասն տարեկան մանկանց երամ մը՝ գլուխ գլխի տուած՝ սիրուն պատկեր մը կը ձեւացնեն:

իրենց մէջտեղը, խմբին մեծը, քուրջի կտորներ հաւաքած, կը շինէ... կը կարծէիք... պէպէ՞ք մը, — իրաւ որ նախնական վիճակի մէջ բան մը, սաղմնային զանգուած մը: Յորենի երկու երեք շիւղեր, ճարտարապէս կարգադրուած, դէմքին ամբողջութիւնը կը կազմեն: Աւելի կտոր մը, զոր աղջիկները գտած են Սկիւտարի փողոցներուն մէջ, կը զարդարէ պէպէքին գլուխը: շրջադաստն է կարմիր ժապաւէնի կտոր մը: Երբ պէպէքը կ'աւարտի, աղջիկն իր անկողնին մէջ կը դնէ զայն խնամով, որպէս զի քնանայ: Արթուն դէմքեր ունին ամէնքն ալ, գրեթէ ամէնքն ալ խարտեաշ, ամէնքն ալ արեւակէզ: Իրենց անուններն են Գրիգոր, Օհանէս, Մարիամ, Եղիսարէթ, Բէթղէհէմ: պէպէքը շինող աղջկան անունն է... Լուսի, իբր տասն տարեկան նրբամարմին աղջիկ մը, ճապուկ մէջքով, սիրուն պզտիկ աչուլներով որոց մէջ տեսնել կը կարծես իր ցոլացուցած այլազան պատկերներուն խառնիխուռն անդրադարձումը: ու չարածձի ժպիտով մը, որ ճերմակ ակռաներու սիրուն շարք մը կը պարզէ, մուկի ակռաներու պէս սրածայր, կը պատասխանէ օտարականին հարցումներուն, խնդալով կարծես անոր անհալի հետաքրքրութեանը վրայ: Եւ ահա սլաշրոջ չարժամար մը, կ'ըսէ իր ընկերներուն.

— Երթանք վաղեմք:

Յաջորդ փայրկեանին ամբողջ խումբը բոյնի մը պէս թառած է մերձաւոր ձիթենւոյ մը վրայ:

Երկամեայ պզտիկ մը, որ մինչեւ այն ատեն նստած է քուրճերու կոյտի մը վերայ, վերմակը մինչեւ ճիւղը քաշած, կը փորձէ ինքն ալ մասնակցիլ իր ընկերաց խաղերուն: վերմակը մէկդի կը նետէ փութով, և կ'սկսի վաղել, բայց տասն քայլ հազիւ առած է, գետին կը թաւալի: անկարող է, պզտիկը: ըզձական նայուածք մը կը նետէ իր ընկերներուն, որք արդէն կը ճլուլլան ոտներուն վրայ, և կամաց կամաց կը դառնայ իր տեղը: այս անգամ ա'լ չ'նստիր, կը պառկի, ամբողջ վերմակով կը ծածկէ գլուխն ալ, կարծես չը տեսնելու համար այն զուարթ տեսարանն որուն չ'կրնար մասնակցիլ: Ան ալ ջերմէն բռնուած է, որովհետեւ կը տեսնեմ իր ազագուն անդամներուն սարսուիլը: Ոչ ոք կայ իր քովը: հայրը, մայրը, եղբայրները, եկեղեցիները գացած են քիչ մը դրամ ժողուելու և զինքն հոն թողած են մի-

նաւորիկ, իբր պահապան իրենց գոյքերուն:

Արթինի ու Մարինոսի քով կը դառնամ: խարոյկը մարած է. պզտիկը, տաքէն թմրած, կը քնանայ այժմ, գլուխը մօրը ծոցին մէջ կծկտած, ու կը խօսակցինք: Մաքուր աշխարհաբար մը կը խօսին, գրեթէ նման Պոլսոյ Հայոց ժողովրդական բարբառին, որուն մէջ սովայն օտար բառերը չափ աւելի պակաս են: Երեւնի իսկ, կատարեալ զարմանքներ կ'ունենան: հերուն կը գոչեն այն սրածայր գործիքն որով կը շինեն իրենց կողմնները: «Մեր ամանները հոս աղէկ չ'կրցան կլակել» կ'ըսէ Մարինոս:

Նոյն օրը կիրակի ըլլալով չեն բանիր: «Կիրակին կը պահենք» կ'ըսէ այրն, ու իրենց թշուառ վիճակը կը պարզէ: «Ապրին հայ աղաքները, հայ քուրիկները, սիրտ-ցաւուկ են, ամենը մէյմէկ բան կը բերեն», բայց քսան հոգին անլրիլ կ'ուզէ ամէն օր: «Ասգերնիս կը քաշենք, անդերնիս չ'քաշենք» կ'ըսէ Մարինոս հառաչանքով մը:

Սեւ գլխով ու սեւ պոչով շուն մը, արեւին տակ փռած է իր յաղթ մարմինը: խումբին պահապան շունն է այն, ինքուպաշ անուն: Քիչ մը անդին տասնի չափ էշեր կը ճարակին, քոսոտ անասուններ, որոց վրայ կը բեւեցնեն իրենց գոյքերը փոխադրութեան ատեն: պզտիկներն ալ անոնց վրայ կը կատարեն իրենց ուղեւորութիւնը:

Խումբն ամբողջ քանի մը օր առաջ առաջ մեկնեցաւ ի Պարտիզակ ուր պիտի անցունեն ձմեռը: Պարտիզակի մէջ կը գտնուին արդէն իրենց պէս մէկ քանի ընտանիքներ: Նիկոմիդիոյ գաւառին մէջ այժմ հայ բոշաներու երեք գիւղ կայ, Արամ գիւղ, Հայոց գիւղ, Գեղամ գիւղ, Վարդաշէն, զորս Սրբազան Առաջնորդն հաստատած է Տրապիզոնէն անդ եկած գնչուներէ:

Լ. ԲԱՇԱԼԵԱՆ

Արտօնատէր

Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ